



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

իրավաբանական անձանց ավելացման իրավունքով ավանդի

թ. _____

"__" _____ 20 թ.

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը ավելացված Ավանդի գումարով, և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանցից:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ _____
(գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույքը՝ _____ տարեկան:
(տոկոսադրույքը թվերով և տառերով)

1.4. Ավանդի վերադարձման ժամկետը՝ "____" _____ 20 թ.

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ _____ ավանդային հաշիվը: Այն դեպքում, երբ *Ավանդատուն* ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը, ապա այդ գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցվում են ցպահանջ ավանդների հաշվին առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով և կարգով:

1.6. Ավանդի տոկոսների վճարում՝ ժամկետի վերջում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. *Բանկը*, նշված ժամկետը լրանալուց հետո, պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին* Ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե Ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Ավանդի գումարը կարող է լրացվել պայմանագրի գործողության ընթացքում: Այն դեպքում, երբ Ավանդատուն լրացնում է Ավանդի գումարը պայմանագրի գործողության ժամկետի վերջին 30 օրվա ընթացքում, ապա լրացվող գումարի տոկոսների հաշվարկը կատարվում է ՀՀ դրամի համար՝ ելնելով տվյալ օրվա դրությամբ Բանկում գործող մինչև մեկ ամիս տվյալ տեսակի ավանդի համար ֆիզիկական անձանցից ներգրավվող ժամկետային ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքից, ԱՄՆ դոլարի համար տարեկան 2 (երկու) տոկոս, Եվրոյի համար՝ 1 (մեկ) տոկոս տարեկան տոկոսադրույքից:

2.3. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.4. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքը այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.5. Ավանդի ներդրումն ու ավելացումը հավաստվում է բանկային փաստաթղթով (չեկով, իճարման համձայնարարականով, մեմորեալ օրդերով, այլ վճարային գործիքով), առանց որի սույն պայմանագիրը առնչինչ է, և Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը: Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա քաղվածքը տրամադրվում է՝

- առձեռն
- փոստի միջոցով _____ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.6. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.5 կետով սահմանված պայմաններով:

2.7. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.8. Այն դեպքում, երբ Ավանդը կամ դրա մի մասը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափով և կարգով՝ ելնելով Ավանդի գումարի (ավելացված գումարի) փաստացի ներդրված օրերի քանակից, իսկ պայմանագիրը շարունակում է գործել Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել պայմանագրով նախատեսված չափով:

2.9. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.10. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարից իրականացնում է զանձում՝ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի:

2.11. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.12. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.13. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին Բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով և տառերով) և արժույթը			
Երկարաձգման ամսաթիվը			
Մարման ամսաթիվը			
Ավելացվող ավանդ			
Ժամկետի վերջում վճարվող տոկոս			
Տոկոսադրույթը (թվերով և տառերով)			
Ստորագրություն	Ավանդատու		
	Բանկ Կ. Տ.		

* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.14. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները:

ԲԱՆԿ

Հասցե _____

Հեռախոս _____

/ստորագրություն/

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Հասցե _____

Հեռախոս _____

/ստորագրություն/